


ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ. Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, «Եվրոպացի հայագետներ» մատենաշար, VI, Երևան, «Զանգակ - 97» հրատ., 2011, 222 էջ:



Վերջին երկու դարում հայագիտությունը բռն ծաղկում ապրեց Եվրոպայում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, Բուալիայում: Առանձնացված, սակայն եվրոպական հայագիտության հետ անմիջական հարաբերությունների մեջ էր նաև Ռուսաստանը՝ հատկապես Պետերբուրգում և Մոսկվայում գտնվող հայագիտական իր բեղուն կենտրոններով: Եվրոպացի հայագետներն առաջին հերթին սերտ կապերի մեջ էին Վենետիկի, Վիեննայի Մխիթարյան միաբանությունների անդամների, ինչպես նաև Կ. Պոլսի, Թիֆլիսի ու Էջմիածնի նշանավոր հայագետների հետ: Գիտական ահա այս կարևորագույն շարժման երախտավորներին է նվիրել իր «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի վեց գրքերը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, անվանի գրականագետ, բանասեր, միջնադարագետ Աելիտա Դոլուխանյանը: Միջնադարը, հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը եվրոպացիներին ու աշխարհին ներկայացնող հայագետներից նա այդ մատենաշարով արդեն մենագրություններ է նվիրել Ֆելիքս Նևին, Մարի Ֆելիստե Բրոսեին, Էդուարդ Դուլոն-րիեին, Վիկտոր Լանգրուային, Ֆրեդերիկ Ֆելդին ու Ֆրեդերիկ Մակլերին:

Ներկայացվող գիրքը նվիրված է ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերին (1869–1938), որը երկար տարիներ զլխավորել է Փարիզի արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայերենի ամբիոնն ու պատրաստել մի շարք ընտիր հայագետներ: Նրանց մեջ ամենանշանավորը դարձավ Ֆրեդերիկ Ֆելդին, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվերով 1964-ին ֆրանսերենով թարգմանեց ու հրատարակեց «Սասունցի Դավիթ» էպոսի հա-

մահավաք բնագիրը՝ բացառիկ տպավորիչ առաջաբանով ու բանասիրական խորագնա հետազոտության արդյունք ծանոթագրություններով:

«Ֆրեդերիկ Մակլերը հայագետ» աշխատությունը բաղկացած է նախաբանից, երկու գլխից (որոնցից առաջինն ունի ինը, երկրորդը՝ յոթ բաժին), «Վերջաբանի փոխարեն» խոսքից, «Հավելված»-ից և օգտագործված գրականության ցանկից: Նախապես նկատենք, որ աշխատության մեջ արժարծված հարցերին անդրադառնալու ենք՝ շեղվելով հիմնախնդիրների վերհանման ավանդաբար ընդունված կառուցվածքային մասերի հերթագայության սկզբունքից:

Նախաբանում Ա. Դոլուխանյանը փաստում է, որ Ֆ. Մակլերը, բացի առանձին գրքերով իր հայագիտական ուսումնասիրությունները հրատարակ հանելուց, շատ հաճախակի տպագրվել է ֆրանսիական ու հայկական պարբերականներում՝ «Revue Archéologique», «Journal Asiatique», «Nouvel Revue», «Revue des traditions populaires», «Foi et vie», «Revue des Etudes Arméniennes», «Անահիտ», «Բանասեր» և այլն: Հայագիտությունը Ֆրանսիայում ու Եվրոպայում զարգացնելու նպատակով նա նշանավոր բյուզանդագետ Շառլ Դիլի, աշխարհափոշակ լեզվաբան Անտուան Սեյեի ու մեծ հայասեր Վիկտոր Բերարի հետ 1919-ին Փարիզում հիմնել է «Հայագիտական ընկերությունը» («Société des Etudes Arméniennes»), իսկ 1920 թ. Ֆ. Մակլերն ու Ա. Սեյեն սկսում են հրատարակել «Հայագիտական ուսումնասիրությունների հանդեսը» («Revue des Etudes Arméniennes»), որը լույս է տեսնում նաև մեր օրերում:

Հայագիտական հետազոտությունների նպատակով Ֆ. Մակլերն այցելել է Եվրոպայի և Ասիայի այն բոլոր երկրները, որոնց

գրադարաններում կային ու կարող էին լինել հայկական ձեռագրեր: Նա այցելել է Հոլանդիա, Բուսանիա, Բոսնիա, Ավստրիա, Լեհաստան, Դանիա, Ռուսի- նիա, Բուլղարիա, Միջին:

«Բացառիկ տեղեկություններ հայ գրականության և մշակույթի վերաբերյալ Ֆ. Մակլերի Հայաստան կատարած ուղևորությունից» բաժնում Ա. Դոլուխան- յանը ներկայացնում է Մակլերի ճանա- պարհորդությունը Թիֆլիս, Էջմիածին, Կ. Պոլիս, որն իրականացվել է 1909-ի հու- լիս-հոկտեմբեր ամիսներին: Այդ ուղևո- րությանը հայագետը նվիրել է մի պատկերագրող գիրք՝ Հայաստանի պատմական հուշարձանների նկարներով: Մակլերի ուղևորությունն ու- նեցել է ֆրանսիական պետության հովա- նավորությունը: Հայագետի ուղեգրական հաշվետվությունը գրքի ձևով՝ «Տեղեկա- գիր դեպի Ռուսաստանում ու Թուրքա- հայաստան կատարած գիտական գոր- ծուղումից (հուլիս-հոկտեմբեր 1909)» վերնագրով, լույս տեսավ Փարիզում 1911-ին: Դրանում փաստացի հիմնավոր- վում են, թե որքան կարևոր դեր են խա- դացել հայերը թե՛ Թիֆլիսի և թե՛ Կ. Պոլ- սի կյանքում: Մակլերը գրում է. «Չնայած Թիֆլիսը վրաց թագավորության մայրա- քաղաքն է, սակայն բնակչության մեծ մա- սը հայեր են: Վրաստանի քաղաքները բնակեցված են հայերով, այն դեպքում, երբ վրացիներն ապրում են գյուղերում: Ռուսական տիրապետության ժամանակ հայերը մեծ թիվ էին կազմում, և քաղա- քապետարանի անդամների երեք քառոր- դը հայեր էին: Ողջ առևտուրը, ինչպես և տեղական արդյունաբերությունը հայերի ձեռքում էր: Տեղական բանկային գործը նույնպես հայերի ձեռքին էր, բացի վրաց ազնվականների բանկից: ... Թիֆլիս քա- դաքի անշարժ գույքի, հողակտորների, այգիների մեծ մասը պատկանում էր հա- յերին» (էջ 149):

Մակլերը թվարկում է Թիֆլիսում հրատարակվող պարբերականները, ո- րոնց մեծ մասը նա հայկական էր: Հայա- գետի ուղեգրության կարևոր հատվածնե- րից մեկը նվիրված է հայ թատրոնին ու

հայ նոր թատրոնի հիմնադիր Գաբրիել Մունդուկյանին, որին անձամբ հանդիպել է ու նրա մասին թողել անմոռաց հուշեր: Հայտնի է, որ Փարիզի արևելյան կենդա- նի լեզուների դպրոցի հայագիտական ամբիոնը հիմնվել է եղեսիացի հայրենա- սեր հայի՝ Շահան Ջրպետի ջանքերով 1810 թ., և այդ ամբիոնը բացելու գործում որոշակի դեր է ունեցել Նապոլեոն Բոնա- պարտը: Հետո էլ Ջրպետի հիմնած ամ- բիոնը գլխավորել է Ֆրեդերիկ Մակլերը:

Գաբրիել Մունդուկյանը քաջ տիրա- պետում էր ֆրանսերենին, և դա Շահան Ջրպետի շնորհիվ, որովհետև վերջինս Թիֆլիս տեղափոխվելուց հետո ապրել է դրամատուրգի հայրական տանը, և նրա մոր խնդրանքով Ջրպետի ֆրանսուհի կի- նը երկար տարիներ ֆրանսերեն է սովո- րեցրել աշակերտ Գաբրիելին: Հայագետը համառոտակի ներկայացնում է Մուն- դուկյանի ստեղծագործությունը և «շատ կրթված» այդ գրողից ստացած հիացա- կան տպավորությունը: Մունդուկյանը խոստովանում է, որ իր ողջ ստեղծագոր- ծությունը նվիրված է հայ կնոջ ազա- տագրման խնդիրներին: Ծերունագրող դրամատուրգը ցնցված էր երիտթուրքերի կազմակերպած Ադանայի հայերի կոտո- րածի փաստից ու իր նոր՝ «Մեր և ազա- տություն» պիեսի բեմադրության ողջ հա- սույթը տրամադրելու էր այդ կոտորածից փրկվածներին օգնելու համար:

Մեծարժեք է նաև Մակլերի գրքի «Կոստանդնուպոլսի հայերը» բաժինը: Հայագետը նշում է, թե ինչ ճնշումներ ու բռնություններ են գործադրում թուրքերն Արևմտահայաստանի հայերի նկատ- մամբ: Նրանք հայերին տեղ չեն տալիս բանկային գործում, խոշոր առևտրի և արդյունաբերության մեջ: Հայերը Թուր- քիայում ունեն փոքրիկ արհեստանոցներ, զբաղվում են գորգի գործով, ունեն տպա- րաններ, հատկապես՝ ոսկերչական ու զարդերի արհեստանոցներ: Ուշագրավ է Մակլերի այն դիտարկումը, ըստ որի՝ Կոստանդնուպոլսի գրական և մշակու- թային կյանքում հայերն առաջ են անցել ոչ միայն թուրքերից, այլև Օսմանյան կայսրության մեջ բնակվող մնացած բո-

լոր ազգերից: Նրանցից հայերն առաջ են անցել հատկապես թարգմանական գործում. նրանք մեծ եռանդով թարգմանում են ֆրանսիական, անգլիական, իտալական, ռուսական գրականությունից առանձին երկեր:

Մենագրության առաջին գլուխը կրում է «Ֆ. Մակլերը և հայ ժողովրդի պատմական ընթացքը» վերնագիրը:

Մակլերը քաջածանոթ էր միջնադարյան հայ գրականությանը, ինչպես նաև նոր գրականությանը՝ արևելահայ ու արևմտահայ հատվածներով: Նա ֆրանսերեն է թարգմանել Սեբեոսի պատմությունը (լույս է տեսել Փարիզում 1904 թ.)՝ այդ երկի մեջ տեսնելով միջազգային պատմական արժեք: Ա. Դոլուխանյանն աշխատության «Սեբեոսի պատմության ֆրանսերեն թարգմանությունը» բաժնում հանգամանալից քննության է ենթարկում Մակլերի այս աշխատանքը: Սեբեոսի երկի առաջաբանում հայագետը գրում է. «Սեբեոսն ամեն ինչ պատմում է ճիշտ, առանց վիճաբանելու, առանց քննական մոտեցում ցուցաբերելու: Պատմիչը հետևում է իր ժամանակի պատմական դեպքերի ընթացքին և թվում է, թե ծանոթ է նաև բյուզանդական ու արաբական պատմիչներին և ժամանակագիրներին: Սեբեոսը չի նշում այն աղբյուրները, որոնցից քաղել է փաստերը, և նրա գիրքը հենց մի կարևոր աղբյուր է, որից հետագա պատմիչները քաղելու են իրենց տեղեկությունները» (էջ 7-8):

Նկատենք, որ Ա. Դոլուխանյանը Մակլերի թարգմանության առաջաբանն ու ծանոթագրությունը բաղդատում է անվանի բանասեր Գևորգ Աբգարյանի՝ 1979-ին Երևանում հրատարակած Սեբեոսի պատմության քննական բնագրի ընձեռած տվյալների հետ:

Մեծարժեք է պատմական Հայաստանի կարևոր բնակավայրերից մեկին՝ Ջեյթունին նվիրված Մակլերի հետազոտությունը, որը քննվում է մենագրության «Գիլիկիայի շուրջը» վերնագրով բաժնում: Հայկական այս քաղաքը գրավել է հայագետի ուշադրությունը՝ նրա բնակիչների ըմբոստ ոգին աշխարհին ներկայացնելու

նպատակով: Մակլերի գիրքը կոչվում է «Գիլիկիայի շուրջը, Ջեյթուն (Համառոտ պատմություն հայկական ազգագրության)»: Իր այս աշխատությունը նա տպագրել է 1916-ին «Journal Asiatique» ամսագրի թիվ 1-ում: Նրանում հեղինակը լայնորեն օգտագործել է Հ. Ալավերդյանի «Ուլնիա կամ Ջեյթուն, Լեռնային ալանի Գիլիկիա, Նկարագիր տեղական, կենսական, բանասիրական և լեզուաբանական» (Կ. Պոլիս, 1884) գիրքը: Բացի այդ, հայագետն օգտագործել է օտար աղբյուրներ՝ հատկապես Գիլիկիայի պատմական անցյալը ներկայացնելիս: Ջեյթունի մասին ազգագրական հետազոտության ազդակը 1915 թ. Հայոց եղեռնը դատապարտելն էր: Բացի ազգագրական մանրամասներից, Մակլերը զեյթունցիների բարբառով ներկայացրել է բանահյուսական հարուստ նյութեր՝ հեքիաթներ ու գրույցներ, օրհնանքներ, անեծքներ, երգումներ, առած-ասացվածքներ, որոնց մի մասի համարժեքները Ա. Դոլուխանյանը ներկայացնում է արդի հայերենով:

Մակլերը փաստում է այն խարդավանքը, որի միջոցով երիտթուրքերի կառավարությունը նենգորեն ու խաբեությամբ զեյթունցիներին ստիպել է վայր դնել ինքնապաշտպանական զենքը: Ա. Դոլուխանյանը գրում է. «... հայագետը նկարագրում է, թե ինչպես երկար դարեր անընկճելի զեյթունցիները, գերմանական հյուպատոսի մատնությամբ ու դրուժանությամբ ընկճվեցին ու դաժանորեն կոտորվեցին թուրք զինվորների ձեռքով: Ֆ. Մակլերը պնդում է, թե այդ իրողությունը պետք է արձանագրել, որովհետև այն դառնում է մարդկության ընդհանուր պատմության մասը» (էջ 35):

1930-ին Փարիզում լույս է տեսնում Ֆ. Մակլերի «Հայաստան և Ղրիմ» աշխատությունը, որի ստեղծման համար հեղինակն օգտագործել է տարբեր ճանապարհորդների ուղեգրական նոթերը: Մենագրության «Ղրիմի հայկական գաղթօջախի մասին» բաժնում Ա. Դոլուխանյանը քննախույզ հայացքով անդրադառնում է հայագետի այս հետազոտությանը: Մակլերը համեմատում է օտարագրի ճանա-

պարհորդների հաղորդածները, հայկական ձեռագրական նյութերը, Բ. Վ. Քուշներյանի «Պատմություն գաղթականության Խրիմու հայոց, Ա. Ճանապարհորդություն ի Նոր-Նախիջեան, Բ. Պատմություն Թեոդոսիոյ, Գ. Ուխտագնացություն ի Կամենից» (Վենետիկ, 1895) գիրքը: Նա փաստում է, որ Կաֆայում՝ Ղրիմում, հայերը հաստատվել են ավելի վաղ, քան ձեռնովացիները ու մեծապես նպաստել են Ղրիմի թերակղզու բարգավաճմանը: Հայագետը նշում է, թե ինքը ժամանակագրական կարգով կնկարագրի այն ձեռագրերը, որոնք ձեռքի տակ ունի և որոնց շնորհիվ, առանց որևէ ճիգի, կարելի է տեսնել, թե ինչպիսի բարձրարժեք արվեստ են ունեցել Ղրիմի հայերը՝ ստեղծելով գրչության և մանրանկարչության իսկական կոթողներ, և որը ամբողջովին հերքում է այն «թեր գնահատականները», որ դրիմահայությունը տվել է գերմանացի ճանապարհորդ Ն. Վլեմանը:

Պատմական բնույթի Մակլերի հետազոտություններից հատկապես ուշագրավ է «Բիթլիսի Աստվածամոր տաճարը» հրապարակումը (լույս է տեսել 1905-ին Փարիզում հրատարակվող «Բանասեր» ամսաթերթում), որը քննվում է Ա. Դոլուխանյանի գրքի համապատասխան բաժնում: Գիտական բարեխղճությամբ Մակլերը ներկայացնում է Բաղեշ (Բիթլիս) քաղաքի պատմությունը և նրա մշակութային դերը հայ ժողովրդի կյանքում: Հայագետը շեշտում է, թե Բաղեշն իր բնակչությամբ հայատարր էր, ուներ հիանալի վանքեր ու եկեղեցիներ, ջրառատ էր ու աչքի էր ընկնում իր գեղեցիկ պտղատու այգիներով: Նա խոսում է Բաղեշի վանական ու կրթական միջավայրի հետ կապվող հայ միջնադարի մեծերի մասին, որոնցից մեկը նշանավոր Մկրտիչ Նաղաշն էր՝ Բաղեշի մոտ գտնվող Պռո ցյուղից: Ա. Դոլուխանյանը նկատում է, որ Մկրտիչ Նաղաշի, Առաքել Բաղիշեցու վերաբերյալ Ֆ. Մակլերի հաղորդած փաստերն ու գնահատականները ցարդ չեն դրվել գիտական շրջանառության մեջ:

Մակլերն անդրադարձել է նաև հայ դավանանքի խնդիրներին ու ֆրանսերեն է թարգմանել XIV դ. նշանավոր մատենագիր, աստվածաբան, փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Տաթևացու «Ընդդեմ տաճկաց» հակաճառությունը: Աշխատության նույն խորագիրն ունեցող բաժնում Ա. Դոլուխանյանը նշում է, թե միջնադարում «Ընդդեմ տաճկաց» գործն ունեցել է ազգայահայան ու գործնական նշանակություն: Գրքի «Հավելված»-ում նա ներկայացնում է այդ գործի Ֆ. Մակլերի ֆրանսերեն թարգմանությունից մի հատված՝ այն զուգադրելով գրաբարյան համապատասխան բնագրի հետ:

Աշխատության առաջին գլխում՝ «Ֆ. Մակլերը և Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» բաժնում, խոսվում է նաև Ֆ. Մակլերի հրատարակած Մարիբասի “caršouni” բնագրի մասին, որը կապվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հետ, մանրամասն անդրադարձ կա անվանի պատմաբան Մ. Ջուլյանի թարգմանած Մակլերի «Հայաստանը և Իսլանդիան» հոդվածին:

Հայաստանի պատմական ճակատագիրը Մակլերն ամփոփ ներկայացրել է «Հայերենի ամբիոնն արևելյան կենդանի լեզուների դպրոցում» ծավալուն հետազոտություն – դասախոսության մեջ, իսկ Արևմտահայաստանի հայության ճակատագիրն ամբողջական ձևով պատկերված է «Հայաստանի շուրջը» հատորում, որը ցատումնալի բողոք է երիտթուրքերի կազմակերպած 1915 թ. Հայոց ցեղասպանության դեմ: «Հայաստանի շուրջը» ժողովածուն լույս է տեսել 1917-ին: Գրքի սկզբում հայագետն ընթերցողին կողմնորոշելու համար ներկայացնում է ֆրանսերենով հրապարակված մի շարք աղբյուրներ, որոնք լույս են սփռում Հայկական հարցի վրա: Նա մեջբերումներ է կատարում հատկապես Գաբրիել Մուրեի և Շառլ Դիլի՝ Հայաստանին նվիրված երկերից ու Մաղաքիա Օրմանյանի գործերից: Մակլերը լայնորեն օգտվում է Սեն Մարտենի, Մ. Բրոսեի, Վ. Լանգուայի, Էդ. Դյուլորիեի՝ հայ պատմիչների երկերի թարգմանություններից, Հայոց եղեռնի ա-

կանատեսների դատապարտող հողվածներին: Նա անդրադառնում է Սան Ստեֆանոյի պայմանագրին և Բեռլինի կոնգրեսի որոշումներին, խոսում է մահմեդական Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ Կովկասի հայերի ազատագրական կռիվների մասին, որի առաջին ջահակիրը դառնում է հերոսական Ղարաբաղը, որն Արևելահայաստանից ավելի շուտ է թոթափում մահմեդական լուծն ու միանում ռուսական կայսրությանը: Խոսում է Դավիթ Բեկի կազմակերպած ազատագրական կռիվների մասին, այնուհետև ներկայացնում 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: «Այս պատերազմում, գրում է Ֆ. Մակլերը, հայերը կամովին թափել են իրենց արյունը՝ օգնելով ռուսական զորքին՝ ազատելու Նախիջևանի ու Երևանի խանությունները՝ հայերի երկիրը («Pays des Arméniens»)» (էջ 21): Հայագետը փաստում է, որ Ռուսաստանին միանալուց հետո հայ ժողովրդի ազգային անկախությունը պաշտպանող ուժերը փորձում են կատարել երկրորդ քայլը և հասնել Հայաստանի իրական անկախացմանը: Այդօրինակ ուժերի պարագլուխը Ներսես Աշտարակեցի կաթողիկոսն էր, որին Մակլերն անվանում է «փիլոն հազած Գարիբալդի» (էջ 21):

Ա. Դոլուխանյանը շատ բարձր է գնահատում ֆրանսիացի մեծ հայագետի այս գիրքը. «Ֆ. Մակլերի «Հայաստանի շուրջը» հատորը մեծ ներդրում է հայագիտության և հայոց ցեղասպանության խնդիրներում գիտական ու անկողմնակալ միջազգային քաջատեղյակ տեսակետ ձևավորելու հարցում. այն այսօր էլ շարունակում է մնալ արդիական ու հրատապ» (էջ 23):

Մենագրության երկրորդ գլուխը կրում է «Հայ գրականությունն ու մշակույթը Ֆ. Մակլերի հետազոտություններում» վերնագիրը:

Ֆ. Մակլերի հայագիտական ծառայություններից մեկն էլ Փարիզի ազգային գրադարանի հայկական ձեռագրացուցակի կազմելն ու հրատարակելն է, որի առաջաբանն ունի ճանաչողական մեծ արժեք: Ըստ այդ առաջաբանի՝ հայագետը

լիովին պատկերացում է տալիս, թե ովքե՞ր, ե՞րբ և ինչպե՞ս են ստեղծել այդ հավաքածուն:

«Ֆրեդերիկ Մակլերը հայագետ» գրքից իմանում ենք 1932-ին Փարիզում Մակլերի հրատարակած «Ժամանակակից հայ գրականության քրեստոմատիա-յի» մասին, որում զետեղված են XIX և XX դարերի արևելահայ ու արևմտահայ գրողների որոշ գործեր: Քրեստոմատիային կցված է հայերեն-ֆրանսերեն շատ հարուստ բառարան:

Ֆ. Մակլերի հայագիտական հետաքրքրությունների շրջանակն անչափ լայն է. նա անդրադարձել է հայկական երաժշտությանը, միջնադարյան մանրանկարչությանն ու զարդարվեստին, աշուղական երգարվեստին: Շատ է հավանել աշուղ Ջիվանու երգերը և Ա. Չոպանյանի թարգմանությամբ ներկայացնում է նրա երկու երգը՝ «Ձախորդ օրերը» և «Աշուղը»: Մակլերի կարծիքով՝ ամենից ճշգրիտ հենց Ջիվանին է բացատրում, թե «ով է աշուղը՝ այսօր էստեղ, իսկ վաղն՝ այնտեղ» (էջ 175):

Էջմիածին այցելած Ժամանակ Մակլերը ծանոթացել ու մտերմացել է մեծն Գոմիտասի հետ, հիացել հայ ժողովրդական երգերի նրա մշակումներով, տպավորվել հանճարեղ կոմպոզիտորի մարդկային անմիջական վերաբերմունքից: Այս փաստերը ևս առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Ա. Դոլուխանյանը ներկայացնում է Մակլերի՝ Գոշի առակներին տված գնահատականը. նա փաստում է, թե ֆրանսիական առակագրության խոշորագույն դեմքից՝ Լաֆոնտենից առաջ Մխիթար Գոշն առակների գործող անձեր դարձրեց բուսական աշխարհի ներկայացուցիչներին: Մակլերը ֆրանսերեն է թարգմանել Գոշի 190 առակներից 178-ը:

Հայագետը զբաղվել է նաև հայ մանրանկարչության ու զարդարվեստի ուսումնասիրությամբ և 1913-ին ու 1924-ին այդ թեմայով հրատարակել է երկու ծավալուն հետազոտություն: Հատկապես 1924-ին լույս տեսած «Հայ աշխարհիկ զարդարվեստը» գրքում նա նոր խոսք է

ասում Ալեքսանդր Մակեդոնացու վարքի՝ հայկական տարբեր խմբագրություններին կցված աշխարհիկ թեմաներով մանրանկարների մասին:

Ա. Դոլուխանյանը գիտական շրջանառության մեջ է դնում ցարդ անհայտ Ֆ. Մակլերի ծավալուն ուսումնասիրությունը՝ նվիրված հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի կյանքին ու գործին, ինչպես նաև նրա մեծ հովանավոր Ֆրիդրիխ Պարրոտի տոհմաբանությանը, որն իր արմատներով ձգվում է մինչև կաթոլիկ եկեղեցու Ուրբանոս V պապը՝ իսլավոփոս արշավանքների խրախուսիչներին մեկը: Կարևոր է Խ. Աբովյանի գործին ու ստեղծագործությանը տված հայագետի այն գնահատականը, ըստ որի՝ նա իր գործով ապահովել է հայ ազգի հարատևությունը

և որ նրա «Վերքի» ներշնչանքով են ծնվել Բաֆֆու հայրենասիրական գործերը:

Խնդրո առարկա մենագրության կարևորագույն արժանիքներից է և այն, որ լեզվատճական-խմբագրական առումով անթերի է. դա պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ գրքի խմբագիրը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանն է:

Ամփոփենք մեր խոսքը. Ա. Դոլուխանյանի «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի հերթական գիրքն ամբողջովին նորություն է ու արժանի է թարգմանվելու եվրոպական լեզուներով, նաև ռուսերենով, որովհետև այն Ֆրեդերիկ Մակլերի անունից առաջ է քաշում կենսական այնպիսի հարցադրումներ, որոնք հայագիտության համար և՛ հրատապ են, և՛ արդիական:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ